ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(24 Նոյեմբերի, կիրակի)

«Ոգի առաւել է, քան զկերակուր եւ մարմին քան զհանդերձ» (Ղուկ. ԺԲ 23):

Հոգին առաւել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը:

Այս բառերը քիչ առաջ այս սրբազան բեմից կարդացվեցին (Ինչպես Հայաստանյայց բոլոր եկեղեցիների բեմերից), որովհետեւ մեր Հայրերը օրվա աստվածաշնչական ընթերցման համար սահմանել էին Ղուկասու Ավետարանից 12-րդ գլխի այս համարը: Այս հատվածում Ավետարանիչն ասում է, թե մի օր մի մեծահարուստ անձ, կալվածքների տեր, ում կալվածքները, հողերը առատ բերք էին տալիս, մտածեց և ասաց. «Ի՞նչ եմ անելու իմ ամբողջ այս բերքը, հարստությունը»: Նրա ունեցած շտեմարանները բավարար չէին՝ պարփակելու համար այդ տարվա բերքը: Եվ նա մտածեց քանդել իր ունեցած շտեմարանները և ավելի մեծը կառուցել, որպեսզի կարողանա ամբարել ողջ հարստությունը: Եվ ինքն իրեն ասում է. «Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղիր» (Ղուկ. ԺԲ 19):

Ավետարանիչն ասում է, որ գիշերը նրան այցելեց հրեշտակը և ասաց, թե այդ գիշեր նրա հոգին մարմնից անջատվելու է և ի՞նչ է անելու իր ողջ ունեցվածքը: Այդ ժամանակ Հիսուս ասում է, թե նա, ով իր անձի, իր համար է գանձ դիզում, չի կարող Աստուծո առջև բարձրանալ և անմահանալ: Այն անձը, որ միայն իր համար է ապրում, նա իր մահն ու իր գերեզմանն է նախապատրաստում: Հենց այդ ժամանակ էր, որ Հիսուս Իր ուսուցումներում ասաց, թե կյանքն ավելին է, քան՝ ուտելը, և մարմինն առավել է, քան՝ հագուստը:

Սիրելի հավատացյալներ,

Մարդկային կյանքում այլ արժեքների մի համակարգ կա, մի տեսակ նվիրապետական կարգ: Այո՛, ուտելը կարևոր է, սակայն ուտելուց ավելի է անձը ապրեցնելը: Հագուստը կարևոր է, սակայն այն մարմնի համեմատությամբ երկրորդական է: Կյանքում երջանկության հասնելու իրողությունն այն է, երբ մարդը կարողանա զատորոշել էականը երկրորդականից, կարևորը՝ նվազ կարևորից: Մեր ժողովուրդը, իմ ըմբռնմամբ, դարերի ընթացքում այս ճշմարտությունն ապրել է: Մեզ շատ անգամ կերակուր և հագուստ է պակասել, բայց քիչ է պատահել, որ քաղցած ենք մնացել կյանքի այն ապրումից, որ անմահության նախաճաշակն է այս երկրում: Դրանք հավիտենական, մնայուն արժեքներն են: Կարող է մի ընտանիք շատ համեստ, նույնիսկ աղքատության մեջ ապրել՝ նյութական առումով, սակայն երջանիկ կարող է լինել ծնողական սիրով, ընտանեկան միջավայրով ավելի, քան երբեմն մեծահարուստները, ովքեր շատ առատ սեղաններ ունեն, շողշողուն հագուստներ են հագնում, բայց երջանկությունը հաստատ չեն ապրում: Եթե մենք հոգեկան այս հավերժական ու կենդանարար արժեքներից զրկվեինք, ապա պատմության ընթացքում չէինք կարող ապրել որպես հայ ժողովուրդ: Ես այսօր պետք է թվարկեմ այդ արժեքներից մի քանիսը:

Առաջինը մեր քրիստոնեական հավատքն է: Նա, ով Աստուծո հետ հաղորդակցությունից զրկվի, կկարվի երջանկության աղբյուրից: Մենք մնացինք Աստծու, Սուրբ Ավետարանի, մեր Եկեղեցու, հոգևոր աղբյուրների հետ հաղորդության մեջ, և այդ սնուցող աղբյուրների միջոցով մեր հավատքը չպակասեց:

Երկրորդ մեծ արժեքը սերն է Հայրենիքի, մեր հայրենի հողի նկատմամբ: Մենք կապված մնացինք այն հողին, որ Աստված տվեց մեզ: Այդ հողում մենք դրեցինք մեր ստեղծագործական կարողությունը, նրան միտխառնեցինք մեր տաղանդը և այն վերածեցինք Հայրենիքի՝ մեր մտածման, ստեղծագործության կնիքը դնելով այս հողի վրա:

Երրորդը՝ լեզուն է, մեր հայոց ոսկեդենիկ լեզուն: Ամեն ինչ կորցրեցինք, զրկվեցինք մեր նյութական ունեցվածքից, երբ Հայաստանում արշավանքներ եղան, ավերումներ եղան, օտարների տիրապետության տակ ընկանք, սակայն մեր լեզուն երբե՛ք ու երբե՛ք չմոռացվեց:

Չորրորդը՝ հայ ընտանիքն է, սիրտը հայ ժողովրդի: Այսօր ինչ տեսնում եք ընտանեկան կյանքի տեսանկյունից՝ աղքատացում է, տկարացում ողջ աշխարհում: Ընտանեկան օջախի սերը, երջանկությունն սկսել է խաթարվել: Մենք գերագույն սրբություն ենք ճանաչել հայ ընտանիքը, և եթե այդ սրբության գաղափարը տկարանա մեր մեջ, ապա մենք զորավոր և հարատևող ազգ չենք կարող լինել:

Սիրելի հավատացյալներ,

Այս ճշմարտությունը ինձ համար մեկ անգամ ևս հաստատվեց անցնող երկու շաբաթների ընթացքում, երբ ես գտնվեցի Անգլիայի մեր հայ համայնքում: Հովվապետական Մեր այցելությունից վերադարձին այս Սուրբ Սեղանի առջև ես Աստծուն եմ ընծայում այդ ժողովրդի սերը, հավատքը և կապվածությունը Մեր Հայրենիքին ու մշակույթին: Անգլիայում ապրում են շուրջ 10.000 հայեր: Նրանք իրենց քրտնաջան աշխատանքով իրենց հացն են վաստակում, իրենց հագուստն են ձեռք բերում, իրենց նյութական պայմաններն ապահովում, սակայն միայն ու միայն այդ նյութականով չեն ապրում: Եկեղեցի են պահում, դպրոց են պահում, հաղորդվում են հայ մշակույթի հետ, Հայրենիքի սերն իրենց կյանքում ծաղկում է, ինչպես կծաղկեր ծառը պարտեզում:

Այնտեղ ես տեսա, թե ինչպես օտար երկնակամարում, օտար ժողովրդի մեջ ապրող հայերը պահում են իրենց սեփական, յուրահատուկ կյանքի ձևը, հավատքը և լեզուն: Այնտեղի կյանքը մի բաղդատեք Հայաստանի հետ, ուր ամեն քայլափոխի հայերեն են խոսում: Օտարության մեջ անկոտրուն կամք, մեծ սեր է հարկավոր հանդեպ Հայրենիքը, որպեսզի ազգային արժեքները պահվեն և կյանքի կոչվեն: Ես այդ ամենի ականատեսը եղա՝ Անգլիայի հայությանը հանդիպելով: Այսօր ես հարգանք եմ ընծայում այդ ժողովրդին և խնդրում եմ Աստծուց, որ Ավետարանի ճշմարտությունը, որ այսօր քարոզվեց, այսինքն՝ կյանքն ավելի է, քան՝ կերակուրը, և մարմինը առավել, քան հագուստը, մնա նրանց և համայն հայության մեջ կենդանի:

Մշտապես մենք նյութապաշտության ենք գնում, մասնավորաբար այս օրերին, օտար ազդեցությունների ներքո ձգտում ենք դեպի նյութական առավելություններ՝ նրանցում տեսնելով արժեքները: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Նյութականը չէ, որ ապահովում է մեր հոգեկան երջանկությունը: Հոգեկան երջանկությունն է արժևորում նյութական հարստությունը: Այս տեսակետից այսօրվա Ավետարանի ճշմարտությունը թող դառնա սեփական համոզում մեր ժողովրդի զավակների համար:

Մեր այցելության կարևոր մեկ բաժինը եղավ հարաբերության մշակումը և զարգացումը Անգլիկան եկեղեցու հետ: 1993 թվականին Քենթրբերիի Արքեպիսկոպոսը եղել էր Հայաստանում. հանդիպել երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետին և փոխհարաբերություններ էր մշակվել: Մենք ուզեցինք, որ այդ հարաբերությունները առավել ևս զարգանան, որովհետև քրիստոնեությունը միայն մեր եկեղեցին չէ, ո՛չ Անգլիկան և ո՛չ էլ բողոքական եկեղեցին, այլ բոլորը միասին՝ շաղկապված եղբայրական սիրով:

Մենք մեր համեստ կարողություններով կամեցանք, որ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, իր ինքնությունը պահելով, հաղորդակցության մեջ մտնի նաև այլ եկեղեցիների հետ, հատկապես՝ Անգլիկան եկեղեցու, որը մեր Հայաստանյայց եկեղեցուն ամենամոտ կանգնած եկեղեցիներից մեկն է ողջ քրիստոնյա Արևմուտքում: Անգլիկան եկեղեցին շատ հարգալից վերաբերմունք է ցուցաբերել մեր եկեղեցու նկատմամբ և ոչ մի հայի չի փորձել իր եկեղեցուց անջատել, ինչպես արել են կաթոլիկները ու բողոքականները: Դրա համար բարեկամական, եղբայրական հարաբերություն է ստեղծվել Անգլիկան եկեղեցու և Հայ եկեղեցու միջև: Բազմաթիվ ուսանողներ մեր եկեղեցուց Անգլիկան Աստվածաբանական դպրոցներում են ուսանել:

Մեզ համար առիթ եղավ նրանց երեք կարևորագույն եկեղեցիներում աղոթք մատուցել և քարոզ խոսել: Քարոզ խոսեցինք այն եկեղեցում, ուր Անգլիայի թագավորի և թագուհու գահակալության հանդեսն է տեղի ունենում, Լոնդոնի Ս. Պողոս Մայր եկեղեցու մեջ, ի վերջո՝ Քենթրբերիի եկեղեցու Մայր Տաճարի մեջ: Այդ եկեղեցին, որի հետ հաղորդակցության մեջ են ողջ աշխարհի Անգլիկան եկեղեցիները, Անգլիկան եկեղեցու համար այն է, ինչ որ Էջմիածինն է Հայության համար: Այդ եկեղեցում Մենք աղոթք արեցինք և ցեղասպանության զոհերի համար հիշատակության կարգ կատարվեց: Մենք հարգանք ընծայեցինք Անգլիո ժողովրդին, որ իր սրտին մոտ է մեր Հայոց եկեղեցին:

Ահավասիկ այն արժեքները՝ քրիստոնեական մեր հավատքը, մեր լեզուն, մեր Հայրենիքը և մեր ընտանիքը, որոնք գերագույն արժեքներն են արժեքների նվիրապետական կարգի մեջ, մենք մեր հանդիպման ժամանակ ուզեցինք թարգմանել նաև մեր քրիստոնյա եղբայրներին:

Այսօր փառք և գոհություն եմ տալիս Աստծուն, որ ինձ այդ գեղեցիկ առիթը շնորհեց, որ Մայր Աթոռի ներկայությունը և հաղորդակցությունը կայացավ թե՛ Անգլիո ժողովրդի և թե՛ Անգլիո հայության հետ: Սեպտեմբերի 6-ին հանդիպեցինք Էլիզաբեթ Բ թագուհու հետ: Նրա հետաքրքրությունը և շահագրգռվածությունը մեր հայ ժողովրդի, Հայաստանյայց եկեղեցու և մեր նոր Հանրապետության հանդեպ խորապես տպավորիչ էր ինձ համար: Այսօր դարն է հաղորդակցությանց, դարն է հարաբերությանց, երբ հարաբերվում ենք ուրիշ ժողովուրդների հետ: Լինենք իրապես քրիստոնյա, իրապես հայ և նրանց ներկայացնենք մեր արժեքները: Այս է այսօրվա պատգամը՝ լինենք հավատարիմ սեփական հավատքին, Հայրենիքին, լեզվին, ընտանիքին և նաև լինենք հաղորդության մեջ ուրիշ ազգերի հետ մեր արժեքների զարգացման համար, որովհետև զարգացումը արդյունքն է հարաբերության, ուրիշների հետ հաղորդակցության, որով մենք կարող ենք տեսնել նոր տեսիլքներ, նոր ճանապարհներ մեր եկեղեցու և մեր Հայրենիքի զարգացման համար Աստուծո փառքի, մեր եկեղեցու պայծառության, մեր Հայրենիքի ամրության և մեր ընտանիքների զորության համար հավիտյանս հավիտենից. ամեն: